ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի
2017 թվականի հունիսի 08-ի N 127-Ա կարգադրությամբ
ձևավորված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

Արթիկի համայնքապետարան 13-ը հունիսի 2017թ. ժամը 14:00
(ք. Արթիկ , Ազատության հրապարակ 1)
Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝
Արտաշես Կարախանյան
Հանձնաժողովի անդամներ՝
Հրանտ Ղազոյան
Մարիամ Փանոյան
Ռուզաննա Ավագյան
Հանձնաժողովի քարտուղար՝
Բաղդասարյան Լարիսա ՝ Գնումների համակարգող

ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի կողմից 09.06.2017թ.-ին գնահատող հանձնաժողովի կողմից հաստատվել և էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հրապարակվել է Արթիկ համայնքի մի շարք փողոցների և Ազատության հրապարակի ա/բ ծածկույթի վերանորոգման աշխատանքների՝ ՇՄԱՔ-ՀՄԱ-ԱՇՁԲ-17/50 ծածկագրով, գնման ընթացակարգի հրավերի տեքստը: Գնման ընթացակարգի հայտերի ներկայացումը իրականացվել է էլեկտրոնային գնումների armeps.am համակարգի միջոցով:

1. ՇՄԱՔ-ՀՄԱ-ԱՇՁԲ-17/50 գնման ընթացակարգին մասնակցության երկու հայտ է ներկայացվել: Հայտ ներկայացրած մասնակիցների տվյալները

Հ/Հ	Մասնակցի անվանում	Մասնակցի հասցե
1.	Սուարդի ԲԸ հայաստանյան մասնաճյուղ	Կոտայքի մարզ, ք. Աբովյան, 2-րդ արդ. թաղ. թիվ 24 տրանս. ձեռն.
2.	«Ճանշին» ՓԲԸ	Շիրակի մարզ, գյուղ Փանիկ

2. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները հետևյալն են ՝

Հ/Բ	Գնման առարկան	Մասնակիցներ	Գին՝ առանց ԱԱՀ /ՀՀ դրամ/	Գին՝ ներառյալ ԱԱՀ /ՀՀ դրամ/
1.	Արթիկ համայնքի մի շարք փողոցների՝ Չարենց, Սվերդլով, Շահումյան, Սաակաձե, Ս.Դավիթ, Գորկի, Անկախության, Տոնականյան, Բաղրամյան, Շիրակացի և Ազատության հրապարակի ա/բ ծածկույթի վերանորոգման աշխատանքներ	Սուարդի ԲԸ հայաստանյան մասնաճյուղ	82 500 000 / ութսուներկու միլիոն հինգ հարյուր հազար/	99 000 000 /իննսունինը միլիոն/
		«Ճանշին» ՓԲԸ	10 451 667 / տասը միլիոն չորս հարյուր հիսունմեկ հազար վեց հարյուր վաթսունյոթ/	12 542 000 /տասներկու միլիոն հինգ հարյուր քառասուներկու հազար/

Գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվեց, որ Սուարդի ԲԸ հայաստանյան մասնաճյուղի կողմից ներկայացված գնային առաջարը գերազանցում է գնման առարկայի ձեռքբերման համար գնումների պլանով նախատեսված ֆինանսական միջոցները: Մյուս կողմից մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են Գնման ընթացակարգի հրավերի «Հայտը ներկայացնելու կարգի» 4.4 կետի խախտմամբ, այն է փաստաթղթերը մասնակցի կողմից հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

«Ճանշին» ՓԲԸ մասնակցի կողմից ներկայացված հայտը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան:

Գնահատող հանձնաժողովի կողմից քննարկվեց վերը թվարկված հանգամանքները և կայացվեց որոշում՝

1. 1 չ/բ համար ներկայացված հայտի հիման վրա «Ճանշին» ՓԲԸ -ին ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից:
2. Մերժել «Սուարդի ԲԸ հայաստանյան մասնաճյուղ» -ի կողմից ներկայացված հայտը:
3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե կատարել հարցում 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:
4. Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում *5 օրացուցային օր* է:

Որոշումը ընդունվել է կողմ՝ 4, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝	_____	Ա. Կարախանյան
Հանձնաժողովի անդամներ՝	_____	Հ.Ղազոյան
	_____	Մ.Փանոյան
	_____	Ռ.Ավագյան
Հանձնաժողովի քարտուղար՝	_____	Լ. Բաղդասարյան